ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

17 հոկտեմբերի 2025թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-06

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Արուս Հայրապետյանի, Արթուր Հովսեփյանի, Հարութ Ակլունցի, Անդրանիկ Եղոյանի կազմով, 2025թ. հունվարի 21-ին իրականացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը սահմանում է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Խորհուրդը իր՝ 17.09.2025թ. որոշմամբ, սահմանել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Ուսումնասիրելով հավակնորդներ Վահե Մկրտչյանի և Կարեն Հակոբյանի ներկայացրած հայտերը՝ Խորհուրդը

Պ Ա Ր Զ Ե Ց

Վահե Մկրտչյանի և Կարեն Հակոբյանի ներկայացրած փաստաթղթերն ամբողջական են և համապատասխանում են Խորհրդի 17.09.2025թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերը և 10.2-րդ հոդվածի 10-րդ և 13-րդ մասերը՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Վահե Մկրտչյանի հայտը,
2. Հաստատել Կարեն Հակոբյանի հայտը,
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հարցազրույցի փուլը (այսուհետ՝ Հարցազրույց) անցկացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում, ԱԺ վարչական շենքում,
4. Հարցազրույցի տևողությունը յուրաքանչյուր հավակնորդի համար սահմանել մինչև մեկուկես ժամ,
5. Սահմանել հավակնորդների Հարցազրույցի փուլի հերթացուցակը ըստ այբբենական կարգի,

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՐՈՒԹ ԱԿԼՈՒՆՑ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂՈՅԱՆ